



**ԳՈՐԻՍԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ (ՕՐՀՈՒՍ) ԿԵՆՏՐՈՆ**

«Վ. Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մաշտոցի 3, հեռ. 094815052, e-mail: nver.goris@gmail.com»

№ Ե - 005/14

10-ր հունիսի 2014թ.

ՀՀ Բնապահպանության նախարար  
պարոն Արամայիս Գրիգորյանին  
Գորիսի Օրհուս կենտրոնի համակարգող  
Նվեր Պողոսյանից

**Տեղեկատվություն ստանալու հարցում**

Հարգելի պարոն նախարար,


Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, խնդրում եմ Ձեզ Գորիսի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն հետևյալի մասին.

1. ՀՀ Բնապահպանության նախարարության, բնապահպանական պետական տեսչության մարզային ստորաբաժանումների կողմից, 1.01.2014թ- 10.06.2014թ ընկած ժամանակահատվածում, Սյունիքի մարզում, իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված բնապահպանական իրավախախտումները՝ ըստ իրավախախտման տեսակների, քանակի /ցանկը/
2. Նշված ժամանակահատվածում, բնապահպանական իրավախախտումների հայտնաբերման արդյունքում, իրավախախտողներից որքան գումար է գանձվել պետություն, որպես բնությանն հասցված վնասի փոխհատուցում

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության /30-օրյա ժամկետ/):

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Կանխավ շնորհակալություն:

Գորիսի Օրհուս կենտրոնի համակարգող՝  Ն. Պողոսյան